

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ



### Մարզկենտրոնը՝

ք. Եղեգնաձոր

### Տարածաշրջանները՝

Վայք,

Եղեգնաձոր

### Քաղաքները՝

Եղեգնաձոր,

Վայք,

Ջերմուկ

Տարածքը	2 308 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.8%
Համայնքներ, 2016թ. տարեկգրի դրությամբ	44
Քաղաքներ	3
Գյուղեր	52
Բնակչության թվաքանակը 2016թ. տարեկգրի դրությամբ	50.8 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	17.7 հազ. մարդ
գյուղական	33.1 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	1.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	34.8 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	190 332.9 հա
այդ թվում՝ վարելահողեր	15 955.1 հա

ՀՀ Վայոց ձորի մարզը գտնվում է հանրապետության հարավային հատվածում: Մարզը պետական սահմանով հարավում սահմանակից է Նախիջևանին, հյուսիսում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզին, արևելքում՝ ՀՀ Սյունիքի մարզին և արևմուտքում՝ ՀՀ Արարատի մարզին:

ՀՀ Վայոց ձորի մարզը շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք յուրահատուկ բնական պատենշներ հանդիսանալով նրա և հարևան տարածքների միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն:

ՀՀ Վայոց ձորի մարզն ունի կենդանական և բուսական բազմազան աշխարհ: Տարածքի 5.7%-ը կամ 13 240.1 հա կազմում են բնական անտառները:

Արտակարգ խայտաբղետ է մարզի մակերևույթը: Հրաբխային ուժերը, երկրաշարժերը, Արփա գետի և դրա վտակների ջրերն առաջացրել են տարբեր ուղղություններով ձգվող բազմաթիվ լեռնաշղթաներ՝ մեծ ու փոքր գագաթներով, խորհրդավոր ձորեր, լեռնանցքներ, սարահարթեր, գոգավորություններ, դաշտեր, մարգագետիններ և բնական բազմապիսի կերտվածքներ, որի ամենավառ օրինակն է Ջերմուկի հիասքանչ ջրվեժը (60 մ):

ՀՀ Վայոց ձորի մարզի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Օդի առավելագույն աստիճանը հարավային շրջաններում հասնում է +41°C-ի, իսկ բացարձակ նվազագույնը՝ -35°C-ի: Տեղումները կազմում են տարեկան 300-ից 700 մմ:

2015թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 1.2 %,
- գյուղատնտեսություն՝ 2.1 %,
- շինարարություն՝ 2.2 %,
- մանրածախ առևտուր՝ 0.4 %,
- ծառայություններ՝ 0.6 %:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, որի արտադրանքը կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 64.5 %-ը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև թռչնաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը:

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են ոչ ոգելից ըմպելիքի՝ «Ջերմուկ» հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները:

**Բեռնատրակտորափոխադրումները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի): Մարզով է անցնում ՀՀ-ն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության հեռանկարային զարգացման գործում:

Մարզում ակնհայտ են **ներքին և արտաքին գրոսաշրջության** զարգացման մեծ հեռանկարները:

**Եղեգնաձոր** քաղաքը (2015թ. տարեվերջին՝ 7.6 հազ. բնակիչ) համարվում է պատմական Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկը և գտնվում է Երևանից 123 կմ հեռավորության վրա:

**Եղեգնաձոր քաղաքի տնտեսության** ընդհանուր ծավալում գերակշռող ոլորտներն են **արդյունաբերությունն ու շինարարությունը**:

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են խաղողի գինու, էլեկտրասարքավորանքի արտադրությունները, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունները:

**Վայք քաղաքը** (2016թ. տարեկազմին՝ 5.7 հազ. մարդ) գտնվում է Երևանից 132 կմ, մարզկենտրոնից՝ 16 կմ հեռավորության վրա:


**Վայք քաղաքի** տնտեսության հիմնական ճյուղն **արդյունաբերությունն է**: Հիմնականում զարգացած են հանքային ջրերի և ոչ ալկոհոլային խմիչքների, շինանյութերի, ձեռագործ գորգերի արտադրությունները:

**Ջերմուկ քաղաքը** (2016թ. տարեկազմին՝ 4.4 հազ. մարդ) գտնվում է 2 070 մ բարձրությամբ լավային սարավանդի վրա (հեռավորությունը Երևանից՝ 175 կմ, մարզկենտրոնից՝ 53 կմ): Ջերմուկը լայն ճանաչում ունի որպես առողջարանային քաղաք: Ճանաչված առողջարաններ են. «Ջերմուկ»-ը, «Նոր կյանք»-ը, «Գլաձոր»-ը, «Աղաջանյանի անվ. առողջարան»-ը և «Արարատ»-ը:

**Քաղաքի** անվանումը կապված է հանքային տաք աղբյուրների՝ ջերմուկների հետ:

**Ջերմուկ քաղաքի** տնտեսության առաջատար ճյուղը ոչ ոգելից ըմպելիքի, **«Ջերմուկ» հանքային ջրի**, արտադրությունն է:

**ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ**  
տղամարդ                      տարիք                      կին



**ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ**

	Քանակը				
	2011	2012	2013	2014	2015
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	229	227	231	313	303
այդ թվում՝					
խանութներ	161	159	167	249	258
կրպակներ	46	46	43	43	19
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1	1	1	1	1
սպառողական ապրանքների շուկաներ	-	-	-	-	-
առևտրի այլ օբյեկտներ	21	21	20	20	25

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	Քանակը				
	2011	2012	2013	2014	2015
Պետական նախադպրոցական	17	18	18	18	15
Պետական հանրակրթական	51	50	50	50	50
Ոչ պետական հանրակրթական	1	1	1	-	-
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	7	7	7	8	8

	Քանակը				
	2011	2012	2013	2014	2015
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական <sup>1</sup>	1	1	1	1	1
Պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	1
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	1	2	2	2	1
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	1	1	1	1	1
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	-	-	-

### ՔԱՂԱՔՆԵՐ

Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *
Եղեգնաձոր	7 675
Վայք	5 702
Ջերմուկ	4 400

### ԳՑՈՒՂԵՐ

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
<b>Եղեգնաձորի տարածաշրջան</b>		
1	Ագարակաձոր	1 328
2	Աղավնաձոր	2 001
3	Աղնջաձոր	437
4	Արենի	1 968
5	Ամաղու	-
6	Արտաբույնք	1 155
7	Արփի	1 214
8	Գետափ	2 405
9	Գլաձոր	2 535
10	Գնիշիկ	63
11	Մոզրով	129
12	Գողթանիկ	198
13	Ելփին	1 277
14	Եղեգիս	451
15	Թառաթումբ	512
16	Խաչիկ	974
17	Հերմոն	204
18	Արատես	-
19	Կալասար	-

<sup>1</sup> Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
20	Հորբատեղ	262
21	Հորս	284
22	Մալիշկա	5 114
23	Շատին	2 048
24	Չիվա	856
25	Ռինդ	1 495
26	Սայլի	234
27	Վարդահովիտ	209
28	Գետիկվանք	-
29	Սևաժայռ	32
30	Վերնաշեն	1 234
31	Քարագլուխ	874
<b>Վայքի տարածաշրջան</b>		
1	Ազատեկ	582
2	Արին	328
3	Արտավան	256
4	Ախտա	-
5	Բարձրունի	392
6	Գնդեվազ	776
7	Գոմք	241
8	Զառիթափ	1 515
9	Զեղեա	166
10	Կապույտ	-
11	Հորաղիս	-
12	Խնձորուտ	520
13	Կարմրաշեն	255
14	Կեչուտ	950
15	Հերիեր	772
16	Մարտիրոս	599
17	Նոր Ազնաբերդ	148
18	Սարավան	308
19	Ուրդեձոր	-
20	Սերս	192
21	Փոռ	112

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻԶՆԵՐ, 2015թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10 000	5 121	4 879
Ծնվածներ, մարդ	116	60	56
Մահացածներ, մարդ	106	52	54
Ամուսնություններ	69	X	X
Ամուսնալուծություններ	10	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	194	91	103
հանրակրթական	1 247	581	666
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	221	145	76
նախնական մասնագիտական (արհեստագործական)	20	6	14
միջին մասնագիտական	45	27	18
բարձրագույն մասնագիտական	50	31	19
Առողջապահության ոլորտ՝			
Հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	36 952	...	...
Մարզիկներ, մարդ	384	71	313
Զբաղվածներ, մարդ	4 659	2 379	2 280
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	187	146	41
բժիշկներ	22	...	...
միջին բուժանձնակազմ	47	...	...
Գործազուրկներ, մարդ	525	361	164
Մոցիայական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 854	1 104	750
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	394	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	35 054	...	...
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	163	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	32	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	21	X	X
միջին ծանրության	8	X	X
ծանր	2	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են: